2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Տվյալ դեպքում հայցվորի կողմից խախտվել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ հայցվոր ընկերությունը սահմանված ժամկետում չի շտկել արձանագրությամբ մատնանշված թերությունները, որպիսի պայմաններում մասնակցի կողմից վճարվել է հայտի ապահովումը, որը ենթակա չէ վերադարձման վերջինիս:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից ներկայացված փաստարկները բավարար չեն արձանագրությունն անվավեր ճանաչելու համար, ուստի հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>Դատարանի վերլուծությունը և եզրահանգումը՝ դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9.4-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Հայցվորի կողմից վճարվել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, միաժամանակ վերջինիս օգտին բավարարված հայցապահանջ առկա չէ, պետական տուրքից զատ այլ դատական ծախսեր չկան, ուստի Դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Արտ Պլաս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքապետարանի՝ գնահատող հանձնաժողովի 08.11.2023 թվականի թիվ 3 արձանագրության 3.1-ին, 5-րդ կետերն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ **Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**

Վճիռը «___» «_____» 2024 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ**